

պատրիարքանալու ժամանակ Գրիգոր Կեսարացի ծերունի կրնայ համարուիլ, քանի որ 1595ին վարդապետ ձեռնադրուած էր, որմէ մինչև մահը 41 տարի կ'անցնի, եւ հաւանաբար 60—65 տարեկան մեռած է:

Իսկ Պասմաճեան Գրիգոր Պատրիարքին ինպատու կրնայ հետեւեալները գիտուիլ. Զաքարիա Կաղզուանցի Պատրիարքն (30 Նոյ. 1773—1781 Մայիս 20 գահընկէց) էր որ թէ կաթողիկեայ Գրիգոր Պասմաճեան նախկին Պատրիարքին եւ թէ Էջմիածնի Ղուկաս նորընտիր Կաթողիկոսին անունը չէր ուզեր որ յիշուի, եւ իր անգթութեանցն ու գողոզութեանը համար ժողովուրդը զինք գահընկէց ըրաւ եւ տեղը Պատրիարք զրաւ Յովհաննէս Համատանցին կամ Պաղտատցին (2 Յունիս 1781—1782 Մարտ 23), որ Երուսաղեմայ միաբան էր եւ Պրուսայի առաջնորդ: Նամակին մէջ յիշուած երեք ամիրաներէն միայն Գասպարի համար կրնանք ըսել՝ որ հաւանաբար Պասմաճեանի ժամանակակից եւ հակառակորդ Մուրատեան Գասպար Ամիրան ըլլայ:

Սակայն ասոր ալ կը հակառակի այն պարագան՝ որ Յովհ. Համատանցի ինչպէս նաեւ Յովհ. Խուլ չեն կոչուիր նաեւ «Կարապետ», եւ առջինը թէպէտ Երուսաղեմի միաբան՝ բայց Պրուսայէն բերուեցաւ: Արդ, քանի որ Զաքարիայի մը յաջորդող ուրիշ «Կարապետ», Պատրիարք մ'անձանօթ է, (թող Կեսարացի Կարապետ կամ Կրպօ աշխարհիկ քահանան, որ